

ՄԵՌԵԱԼ ԾՈՎԻ ԶԵՌԱԳՐԵՐԸ

Երջին հարյուրամյակի ընթացքում, երբ հնագիտական պեղումները հսկայական նյութ մատակարարեցին Արևելքի պատմության և բանասիրության համար, Պաղեստինը, սեմական մյուս երկրների համեմատովիշտ քիչ էր պեղված:

Սակայն համաշխարհային երկրորդ պատերազմից հետո տեղի ունեցավ մի հայտնագործություն, որն ամբողջ աշխարհում գիտական հասարակության ուշադրության առարկա դարձավ:

1947 թվականին Հովհանի անապատում (Պաղեստին), Մեռյալ ծովի արևմտյան ափին, մի բեղմկի (կամ բեղմին՝ անապատբնակ արար) իր կորուսյալ ոչխարը փնտուելիս, մտնում է մի քարայր և այնտեղ գտնույն ձեռագրերի փաթաթներ՝ դրված կավե մեծ սափորների մեջ։ Քարայրը գտնվում է պատմական Երիքով քաղաքից 12 կիլոմետր հեռավորության վրա և Մեռյալ ծովի ափից 2 կիլոմետր դեպի ներս։ Նրանից ոչ շատ հեռու գտնվում է «Այն Ֆախչա» կոչված ջրի ակումբը, որի անունով էլ կոչվում է քարայրը։ Նույն ջրանում գտնվուած են նաև մի հին բնակավայրի ավերակները (Խիրքեթ Կումրան), որի մոտ կա մի հին գերեզմանոց։

Հետաքրքրական է այդ ձեռագրերի ճակատագիրը։ Արարը այն գտնելուց հետո մի մասը ծախում է մի բեթղեհեմցի հնությանց վաճառկանի։ Ձեռագրերը շորս փաթաթներ գնուած է Երուապեմի Ս. Մարկոսի վանքի ասորիների Աթանաս Միտրոպոլիտը։ Վերջինս դիմում է մի քանի մասնագետների, որոնք շեն կարողանուած որոշել նրանց իսկական արժեքը, լինուած են նույնիսկ այնպիսիները, որոնք այս բոլորը կեղծված են համարում։

Ձեռագրերի մնացյալ փաթաթները, ինչպես նաև երկու ամբողջական մեծ սափորներ գնում է իսրայելացի հրեա հնագետ (այժմ հանգուցյալ) պրոֆ. Սուկենիկը, որն առաջին անգամ լինելով գնահատում է նորահայտ ձեռագրերի հսկական արժեքը։ Մ. Մարկոսի վանքի գնած ձեռագրերը մի առժամանակ ընկան ամերիկացիների ձեռքը, ույց վերջերս իսրայելի կառավարությունը գնեց դրանք և հանձնեց Երուսաղեմի Երաշական համալսարանի հնագիտական թանգարանին։

Այս ձեռագրերի գյուտը արևելագիտության ասպարեզում մեծագույն հայտնագործություններից մեկը հանդիսացավ։ Նրանցով զբաղվում է այժմ իսրայելի, Ելորպայի և Ամերիկայի երրայագետների մի մեծ խումբ։ Բավական է միայն ասել, որ մինչև 1956 թվականը այս հարցի շուրջը լուս է տեսել մոտավորապես հազար գիտական աշխատություն (գրքեր, հոդվածներ և այլն)։ Բազմակողմանի հարցերի քննարկմանը մասնակցում են շատ երկրների գիտնականներ, ինչպես օրինակ՝ է. Սուկենիկ, Մ. Բըրոուզ, Զ. Տրեվու, Ա. Դյուպոն-Սոմեր, Պ. Կալե և ուրիշներ։

Երրայագետները հենց առաջին հայացքից նոր ձեռագրերի մեջ ճանաչում են ծամալիի մարգարեռության բնագիրը, որը գտնվել է զույգ գրչագրերով։ Գտնվել են նաև Ամբակումի մարգարեռության մեկնությունները, մի պատմություն՝ «Լույսի որդիների պայքարը խավարի որդիների գեմ», մի կրոնական համայնքի կանոնադրությունը, օրհներգների ժողովածու և այսպես կոչված «Ղամեթ»

1 Կ. Մատրկով, «Ձեռագրեր Մեռյալ ծովի շրջակայթից», «Բանբեր հին պատմության», Մոսկվա, 1956 թ., հատ. Ա, էջ 88—89 (ոռուսերեն)։

Հայտնությունը։ Ակներե է, որ այս բոլոր մի հին կրոնական համայնքի գրադարա, նի մի մասն է եղել։

Չափազանց արժեքավոր են ծսայի մարգարեռության երկու գրչագիր օրինակները։ Մինչև հիմա Ս. Գրքի մեջ հասած և ժամանակը ճշտված հանգույն ձեռագիրը ժղարից է, իսկ այս նորահայտ ձեռագրերը իրենց ժամանակով նրանից մի հազարամյակ առաջ են։ Ծսայի մարգարեռն վերոհիշյալ համայնքի անդամների կողմից հատուկ ուշագրության է արժանացել, հավանաբար, շնորհիվ իր բողոքի ոգով և Մեսիալի գալստյան մասին իր մարգարեռությանը։ Այս երկու նորահայտ ձեռագրերը իրարից որոշ տարրերություններ ունեն։ Նրանցից մեկը որոշ տեղերում բոլորովին հեռանում է թե՝ մասորեթյան² հանրածանոթ խմբագրությունից և թե՝ հունական Յոթանամնից թարգմանությունից։ Երկրորդ գրչագիրը թեպետև ավելի մոտ է մասորեթյան բնագրին, այնուամենայնիվ որոշ տեղերում նույնպես հեռանում է նրանից։

Ձեռագրերի մեջ կա, ինչպես ասվեց, Ամբակումի մարգարեռության մեկնությունը։ Ս. Գրքի մեջ այս մարգարեռությունը բաղկացած է երեք շատ փոքր գլուխներից, իսկ նորահայտ ձեռագրերի մեջ կա միայն երկու առաջին գլուխների մեկնությունը, իսկ երրորդի մասին ոչինչ չկա։ Սա խոսում է ի նպաստ այն բանասերների ենթագրությանը, թե այս երրորդ գլուխը սկզբնական խըմբագրության մեջ չի եղել։ Մեկնության անառն հեղինակը Ամբակում մարգարերի խոսքը ուզում է բնորոշել հենց իր ժամանակաշրջանը։ Այստեղ հիշվում է մի ժողովորդ, որը կարծվում է, թե հոռմեացիք պետք է լինեն։

Շատ հետաքրքրական է վերոհիշյալ կրոնական համայնքի կանոնադրությունը, որը նկարագրում է նրանց արարողությունները և կարգերը։ Դրանք հիշեցնում են որոշ շափով վաղ միջնադարյան շրջանի վանական կարգերը։ Այստեղ խիստ կերպով պահպանվում է ինչպէս համայնքի կամ մի այլ դեպքում ուղղակի ասում է՝ «զորդիս լուսոյ» (Ղուկ. ԺԶ 8), «ծս հմ լոյս աշխարհի» (Յովհ. Ը 12)։ Պողոս առաքյալը ավելի հստակ կերպով ասում է՝ «զի ամենեքան դուք որդիք լուսոյ էք», և ապա հակադրելով ուրիշներին՝ «չեմք խաւարի» (Ա. Թեսագ. Ը 5)։

Ձեռագրերում գտնվող օրհներգերը (սաղմոսները) իրենց ձևով հիշեցնում են Ս. Գրքի սաղմոսները, բայց իհարկե ավելի ուշ ժամանակաշրջանի արդյունք են։ Իսկ «Ղամերի հայտնություն» կողման ձեռագրերը գտնվում

մայնքին։ Վերջինս բաժանված է եղել երկու մասի՝ քահանաներ և հասարակ անդամներ։ Քահանաները հատուկ խավից էին և կոշվում էին Սադովկի որդիներ։ Այս ձեռագրի մեջ, ինչպես նաև այլ ձեռագրերում հաճախ հիշատակված «Սադովկի որդիներ»-ը՝ հավանաբար կապ ունեին սադովկեցիների հայտնի աղանդի հետ։

Համայնքի բոլոր անդամները սպիտակ հագուստ էին կրում և ապրում էին վերոհիշյալ իիիրեթ Կումրանի կացարանում։ Իսկ շրջակա քարայրների մեջ հավանաբար ապրում էին համայնք մտնել ցանկացողները։ Համայնքի անդամների օրը սկսվում էր լուսաբացին ծիսական լվացումով և աղոթքներով։ Ապա, սեղանատանը նախաճաշելուց հետո, բոլորը գնում էին աշխատանքի մինչև մայրամուտ, որից հետո նորից՝ լվացում, աղոթք և ճաշ։ Ապա գիշերվա մի մասը դարձաւ անց էին կացնում աղոթելով և կրոնական գրքերի ընթերցմամբ։ Այս կարգերը խախտողները ենթարկվում էին պատժի, որի առավելագույն չափը համայնքից վտարումն էր։

«Լույսի որդիների պայքարը խավարի որդիների գեմ» ձեռագրերը պատմում է Ղերի, Հուգայի և Բինիամինի որդիների պայքարը Բելիարի որդիների գեմ, որոնք (ինչպես ձեռագրում է) հետեւյալներն են՝ եղովացիք, մովարացիք, ամմոնացիք, փղոտացիք և այլն։ Այս գեպքերը հավանաբար վերաբերում են Մակարայեցվոց հարստության ժամանակին (164—63 Ն. Ք.), երբ Հուգայի երկիրը պայքար էր մղում հարևան ցեղերի գեմ։ Այստեղ նկարագրվում են դետացի քահանաների հանդիսավոր արարողությունը Հրեից զորքերի դուրս գալու ժամանակի, զորքի ստորաբաժանումները, նրա շարժմելու աղջանշանը և այլն։

«Լույսի որդիներ» անունը հիշեցնում է Քրիստոսի հայտնի խոսքերը իր աշակերտներին՝ «Դուք եք լույս աշխարհի» (Մատթ. Ը 14). Կամ մի այլ դեպքում ուղղակի ասում է՝ «զորդիս լուսոյ» (Ղուկ. ԺԶ 8), «ծս հմ լոյս աշխարհի» (Յովհ. Ը 12)։ Պողոս առաքյալը ավելի հստակ կերպով ասում է՝ «զի ամենեքան դուք որդիք լուսոյ էք», և ապա հակադրելով ուրիշներին՝ «չեմք խաւարի» (Ա. Թեսագ. Ը 5)։

Ձեռագրերում գտնվող օրհներգերը (սաղմոսները) իրենց ձևով հիշեցնում են Ս. Գրքի սաղմոսները, բայց իհարկե ավելի ուշ ժամանակաշրջանի արդյունք են։ Իսկ «Ղամերի հայտնություն» կողման ձեռագրերը գտնվում

² Մասորեթյան կամ Մասորա է կոշվում Ս. Գրքի վերջնական խմբագրությունը, մասորեթների՝ հրեա ուսումնական կրոնավորների կողմից կատարած, որի նպատակն էր կանխել բոլոր թյուրիմացությունները, թե՝ բնագրի, թե՝ ընթերցանության և արտասանության մեջ, որովհետև ձայնավորներից զուրկ երրայտական այրութենը հաճախ թյուրիմացությունների առիթ էր տալիս։

³ «Բառարան Ս. Գրց», Կոստանդնուպոլիս, 1881 թ., էջ 474—475.

է շատ վատ վիճակում և հավանաբար մի պարականուն գրվածք է:

Ահա սրանք են այն բոլոր ձեռագրերը, որոնք գտնվել են վերոհիշյալ քարայրում 1947 թվականին: Բացի վերջինից («Ղամեջի հայտնությունը») բոլոր մնացած ձեռագրերի լեզուն հին երրայերենն է: Ձեռագրերի լեզուն իր բառապաշտով և քերականական ձևերով միշտն տեղ է գրավում ուշ շրջանի Աստվածաշնչի լեզվի և հելենիստական շրջանի երրայերենի միջև։ Համենայն դեպունավելի հին է, քան այժմ մեզ հայտնի մասորեթյան բնագրի լեզուն։

Տեսնելով այս հրաշալի արդյունքները, հնագիտները կազմակերպեցին հետախուզական պեղումներ, որոնց ընթացքում դեռ շատ նոր իրեր գտնվեցին Մեռյալ ծովի քարայրների շրջանում։ Որոշ իրեր էլ ձեռք են բերվել քեղաների միջոցով, որոնք գաղտագողի մտնելով քարայրները՝ իրերը դուրս են բերում ժամելու նպատակով։

Գտնվել են քաթանե հյուսվածքեղնի կտորներ, մեծ քանակությամբ խեցեղնի բեկորներ (ուշ հելենիստական և հունեական շրջաններից), որոնք իրար կպցնելով կարողացի են կազմել երկու լապտեր և մոտավորապես 50 սափոր։ Հնագիտները հայտնաբերել են ձեռագրերի մոտավորապես 600 պատահիկներ՝ գրված մազաղաթի և պապիրուսի վրա։ Որոշ պատահիկներ կապ ունեն սափորների մեջ ձեռագրերի հետ և այս բանը հնարավոր դարձեց հաստատ կերպով պնդելու, որ 1947 թվականին հրապարակ հանված նյութերը կեղծված չեն եղել։ Պատահիկների մեջ կան հատվածներ Ս. Գրքի հետևալ գրեթեց՝ Ելք, Ղետական, Թիւք, Բ Օրինաց, Երեմիա, Հոռութ, Սաղմուք։ Կան նաև պատահիկներ, որոնց բովանդակությունը աստվածաշնչական չէ։ Հայտնաբերված են նաև Ս. Գրքի հունարեն թարգմանությունից մի հատված և Տովքիթի գրքից երրայերեն և արամերեն հատվածներ։

Հնագիտական պեղումներ են անցկացվում նաև քարայրների մօտիկ և նիրեթ Կումրան կողման վայրում, որտեղ հայտնաբերված են շենքերի մնացորդներ՝ աշտարակ, սենյակներ, շենքի զանազան հարմարություններ և այլն։ Պեղումներից պարզվում է, որ այստեղ կյանքը գոյություն ունենալուց զադարել է հրդեհի և այլ պատճառներով։ Այստեղ գտնվել են զանազան շրջանների պատճառով դրամներ (Բ դար. Ք. Ա. — Ա դար. Ք. Ե.)։

Այս գոլոր հայտնագործությունները, որոնք օրեցօր դեռ ավելի և ավելի են կուտակվում, փոխեցին գիտնականների կար-

ծիքը Պաղեստինի նկատմամբ և արդեն գիտական գրականության մեջ Հուդայի երկիրը իրավամբ կոչվում է «Երկրորդ եղիպտոս»։

Նորահայտ ձեռագրերի ժամանակի որոշման համար հսկայական աշխատանք է տարված։ Քիմիական և այլ միջոցներով մասնագիտները կարողացել են որոշել քարայրներում գտնված հյուսվածեղնից հնությունը, այսինքն՝ Բ դար Ք. Ա. — Գ դար Ք. Ե.։ Ձեռագրերը պարունակող սափորները նույնպես Ա դարի արտադրանք են։ Ահա մոտավորապես այս դարերում է, որ պետք է թաքնված լինեն այս ձեռագրերը։ Բայց սա դեռ միայն թաքցնելու ժամանակն է, իսկ ձեռագրերը կարող էին գրված լինել դրանից շատ ավելի առաջ։

Լեզվական տեսակետից այս ձեռագրերը սեմագիտներին օգնում են ավելի ճիշտ գաղափար կազմելու այն ժամանակաշրջանի մասին, երբ երրայերենը աստիճանաբար ետ էր մզգում, իր տեղը զիշելով արամեական բարբառներին, որոնք քայլ առ քայլ տեղ գրավեցին սեմական շատ երկրներում։

Ս. Գրքի բնագրերի քննական ուսումնասիրության համար նոր հայտնաբերված ձեռագրերը կարենու նյութ են տալիս։ Առաջին հերթին հարց է ծագում՝ որոշել այս նոր ձեռագրերի փոխհարաբերությունը Ս. Գրքի մասորեթյան ժանոթ բնագրի և հունարեն Յոթանասնից թարգմանության հետ։ Այս բոլորի հետ, եթե կրկին համեմատվի նաև հայկական ոսկեդարյան թարգմանությունը, ապա դա կարող է բանափառական շատ պրատումներ կատարելուն նպաստել։ Երրայագիտությունը բանափառական առարկաների մեջ կարենու տեղ է գրավում, առանց որի ոժվար է պատկերացնել սեմագիտության զարգացումը և Հին Արևելքի ուսումնասիրությունը։

4 Ձեռագրերը քարայրներում թաքցնելու նմանօրինակ դեպքեր ենք են նաև միշտադրյան Հայաստանում (Կ. Գանձակցի, «Պատմութիւն», Վենետիկ, 1865 թ., էջ 129). Սեր քարայրները նույնպես երեք մասնակիւթիւն խուզարկվեն, այսուղեղ հավանաբար շատ գանձեր կհայտնաբերվեն Տե՛ս Ս. Տեր-Ավետիպայան, «Հազարամի և Սանահինի քարայրների հնագիտական հետազոտության կանորություններ» (ուսանելուն), «Կովկասյան թանգարանի Տեղեկագիր», Բ, Թիֆլիս, 1915 թ.։

5 Ս. Տեր-Մովսիսյան, «Պատմություն Ս. Գրոց հայկական թարգմանության» (ուսանելուն), Ս. Պետերբուրգ, 1902 թ., էջ 5—27։

6 Ս. Տեր-Միմիյան, «Աստվածաբանական գիտություններ», Վաղարշապատ, 1933 թ., էջ 46—51,